

ատենն ալ, յառաջ չգնաց, որովհետեւ պարզապէս ժողովրդական նախապաշարումէ բռնադատուած կամ թէ պարագաներուն յարմարելու համար՝ պահ մը օտիպուեցաւ խիստ միջոցներու դիմել, իր հողէն իւրելի եղած դիմումները քործադրելէ ետքը։¹

¹ Նոյն իսկ, 1737ին, երգել չուուաւ «Ո՛վ հրաշալի», Շարականին վերջին պատկերը եւ ասոր համար քիչ նեղութիւն չկրեցին թէ Կոլոտ եւ թէ Շղթայակիր. Շղթայակիր՝ որ իր ձեռքով գրի առած է այս գէպերն պատմութիւնը.

«Եւ յետ աւուրց ինչ անցելոց՝ յօրն Ուրբաթ, որ ի վաղին (1737 Օգոստոս 8, Շբ.) Եփեսոսի Ս. Ժողովոյն տօն էր, Ղայմախամ Եկէն Մեհմէտ Փաշան, որ նախ մարտապետ էր, թեւադրութեամբ լատինացւոց մեծին սաստիկ հրաման յղեալ էր առ Պատրիարք վարդապետն (= Կոլոտ), թէ ի Հայոց եկեղեցիան պատուէր տուր, զի զՈ՛վ հրաշալւոյ յետին երեք տուն շարականն մի ասիցեն եւ նա յահէ պատուէր ետ չասել. որ եւ զամենայն չասացին. եւ Ո՛վ հրաշալի ասելն խափանեցաւ ի Ստամպոլու, եւ եղեւ այն շար սովորութիւն, եւ մեք յայնմ գիշերի յեկեղեցին ոչ գնացաք, այլ արամութեամբ եւ լալով զօրն անցուցաք:

Եւ ի պահոց երեքշաբթին (Աստուածածնի պահոց, Օգոստոս 11. Գշ.) քահանայք եւ եկեղեցապանք եկին զմեզ հրաւիրեցին ի տօն սրբոյ Եկեղեցւոյ (= Մայր Եկեղեցւոյ ի Գում-Գափու), եւ ի Զորեքշաբթի միամիտ ելեալ գնացաք ի Սուրբ Աստուածածնի Եկեղեցին, եւ տեսաք զազաղակն եւ զշփոթ յոյժ ի մէջ նոցա վասն ոչ ասելոյն զերեք տունն. եւ մինչեւ խաղաղութիւն եղեւ՝ Աստուծոյ է գիտելի՝ թէ զինչ կրեցաք»:

Հրամանը այնքան սաստիկ էր որ նոյն տարին, Նիկիոյ Ս. Ժողովին օրը, Սեպտեմ. 5, քանի մը Կեսարացիք, որ արգիլուած շարականը երգած էին «վեց հոգի ի քիւրեկն զօրուեցան» (Սէն, 1866 էջ 142):

Ըստ Զամէնանի, Կոլոտ «Ո՛վ հրաշալի» շարականին վերջին պատկերը ոչ միայն իր պատրիարքութեան սահմանին երգել չուուաւ, այլ եւ գրեց նոյն իսկ Երբահամ կաթողիկոսին, որպէս զի ամէն կողմ հրահանգ եւ հրաման տայ նոյնը ընելու. (Հմմտ. Զամէնան հտր. Գ. էջ 775-6. 806):

— Ըսյ տեղ գիտել կու տանք թէ Միխիթար Արքայի